

Երևանի պետական համալսարանի “Կայուն զարգացման” կենտրոնի գործունեության
2014թ մայիս - դեկտեմբեր ժամանակահատվածի

Նախատեսվում է կենտրոնի մասնագետ-փորձագետների ընդգրկմամբ կատարել հետևյալ աշխատանքները՝

- Որոշել պոչամբարների ձևավորման նկատմամբ պահանջները, նրանց կառուցման ինժեներատեխնիկական և կայունության մոնիթորինգի (մշտադիտարկման) նորմերը:
- Որոշել շրջակա միջավայրի վրա տեխնոլոգիական ազդեցության նորմատիվային ցուցանիշները, պոչերի էկոլոգիական վտանգավորության տեսակներն ու դասերը և մոնիթորինգի կազմակերպման ձևերը:
- Որոշել պոչամբարների ռեսուրսային ներուժի երկրաբանատնտեսագիտական գնահատման սկզբունքները:
- Որոշել պոչամբարների ռեկուլտիվացիայի և կոնսերվացման պահանջները:

Արդյունքում կմշակվեն և ՀՀ կառավարությանը կներկայացվեն առաջարկություններ՝ համապատասխան նորմատիվների ու կանոնակարգերի մշակման և ընդունման համար:

Փորձագետների աշխատանքների շրջանակներում են լինելու.

1. Պոչամբարների առաջնային և նեցուկային պատվարների կայունության գնահատման, պոչամբարի հատակի կառուցման պահանջների ցանկի որոշում, այդ թվում դեֆորմացիաների, ֆիլտրացիայի ընթացքի, ծակոտինային ջրի ճնշման, լարվածության վիճակի, պոչանյութի ֆիզիկամեխանիկական հատկությունների և այլ պարամետրերի թույլատրելի սահմանների որոշում: Պոչամբարի վիճակի մշտադիտարկումների անցկացմանը ներկայացվող պահանջների սահմանում: Պինդ և հեղուկ հարստապոչերի ազդեցության հետևանքով ստորերկրյա ջրերի քնակական ու որակական փոփոխությունների գնահատման և հողաբուսական ու գրունտային շերտերի աղային կազմի փոփոխությունների ուսումնասիրությունների կազմակերպման աշխատանքների համալիրի որոշում:
2. Պոչամբարների տարածքի սեյսմիկ վտանգի և հնարավոր սեյսմիկ ազդեցության գնահատմանն ուղղված միջոցառումների ցանկի որոշում: Հարթակների գրունտների և զանգվածային ապարների սեյսմիկ արձագանքի, բնական և տեխնիկական ցնցումների օջախների որոշում և այլն:
1 և 2 կետերի կատարումը հանձնարարել Մ. Գրիգորյանին և Ս. Քելյանին:
3. Պոչամբարների վրա ազդող կլիմայական և ջրաբանական վտանգավոր երևույթների ռիսկերի շրջանակի գնահատում, նրանց ազդեցության նվազեցման և հետևանքների մեղմման ուղիների որոշում:

4. Շրջակա միջավայրի վրա տեխնոլոգիական ազդեցության գնահատման, պոչերի վտանգավորության տեսակների և դասերի սահմանման սկզբունքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար մոնիտորինգի կազմակերպման ձևերի որոշում:
 5. Պոչամբարների ռեսուրսային ներուժի գնահատման նպատակով երկրաբանահետախուզական հետազոտությունների համալիրի որոշում:
 6. Պոչամբարների ռեկուլտիվացիայի և կոնսերվացման առաջնահերթ պահանջների շրջանակի որոշում:
- 3-ից 6 կետերի կատարումը հանձնարարել է Մովսիսյանին և Ս. Ներսեսյանին:

Կատարման ժամկետներ

Կլոր սեղանի նյութերի նախապատրաստում՝ մայիս - նոյեմբեր 2014թ.

Կլոր սեղանի անցկացում՝ նոյեմբեր 2014թ.

Նյութերի ամփոփում և առաջարկությունների ներկայացում՝ դեկտեմբեր 2014թ.

Որպես փորձագետներ պրոյեկտում աշխատելու համար ընդգրկվելու են հետևյալ մասնագետները՝ Մարատ Գրիգորյան, Սուրեն Ներսեսյան, Հարություն Մովսիսյան, Սարգիս Քելյան:

Աշխատանքը կատարված է ԵՊՀ Կայուն Ջարգացման Կենտրոնի կողմից, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

«ԿԶԿ»-ի ղեկավար
երկրաբանա-հանքաբանական գ. թ.

Ռ. Մովսեսյան